



## Ն. ԹԱՀՄԻԶՅԱՆ

### ԽԱՇԱՏՈՒՐ ՏԱՐՈՒԵՑԻՆ ԵՎ ՀԱՅՈՅ ՊԱՏԱՐԱԳԻ ՆԱԽԵՐԳԸ

Պատմական Հայաստանի հյուսիս-արեւելյան շրջանի վանքերից՝ հայ միջնադարյան հոգևոր մասնագիտացված երգաստեղնության զարգացման մեջ կարևոր դեր է խաղացել, մասնավորապես, Հաղարծինը, Բատկապես XII հարյուրամյակի վերջին քառորդում, երբ այստեղ վանահայր էր ողջ Հայաստանում (ու նաև նրա սահմաններից դորս) լավ ճանաչված, նեղինակալոր գիտնական և բանաստեղծ-երաժիշտ Խաչատոր Տարոնեցի (կամ Հաղարծնեցի) վարդապետը:

Ժամանակը, երբ գործել է Տարոնեցին Հաղարծնում, Բատկորոշվում է նրանով, որ Հայաստանը, և առաջին հերթին նրա հյուսիս-արեւելյան մարզը, թոթափեղով սեղածիւնական արշավանքների ու տիրապետության ծանր հետևանքները, Զաքարյանների առաջնորդությամբ թևակիսում էր ազատագրման, Հյութական միջոցների կոտակման ու դրանով իսկ՝ տնտեսական, քաղաքական ու մշակութային վերելքի մի նոր ըրջան<sup>1</sup>:

Վերջինս ընդհանրապես ողջ պատմաշրջանի մասնագետ երաժիշտներին առաջնորդ էր երեք կարևոր խնդիր. պաշտոններգության բարեզարդությունն ու բանուրոգությունը (նին նշանավոր բանա-

տեղծ-երաժիշտների նեղինակությունների հարազատ վերարտադրությամբ), խազագրության արվեստի տարածումն ու նետագա մշակումը և ատեղծագործական գործունեության խորացումն ու ծավալումը: Տարոնեցու երաժշտական գործունեությունը վերաբերում է նշված երեք կետերին ևս: Այդ մասին ունենք պատմական-գրական և ձեռագրային մի քանի տվյալներ: Դրանք քանակական թեև չափազանց թիւնեն, բայց ուշագրավ ու շատ պերճափսու<sup>2</sup>, և որպես այդպիսիք մանրազնին քնննարկված են Հաղարծնեցի վանքին ու Խաչատոր Տարոնեցու գործունեությանը նվիրված մեր հոդվածում<sup>3</sup>:

Այստեղ մեր ուշադրության միակ առարկան է Տարոնեցու անվանը կապված՝ զգեստավորման «Խորհուրդ խորին» մեծիմաստ շարականը, որ հայոց պատարագում պահպանվել է գրական խորերին արժանի տաղատիպ վեհաշունչ մեղեղիով հան-

<sup>1</sup> Գարեգին կարողիկոս Հովսեփյան, Խաղարծնակը կամ Պողոսյան նայոց պատմության մեջ, Անդիշաս, 1969, էջ 1—14:

<sup>2</sup> Տես Կիրակոս Գանձակեցի, «Պատմութիւն հայոց (աշխատությամբ Կ. Մելիք-Օհանանյանի)», Երևան, 1961, էջ 211:

<sup>3</sup> Տես Ն. Թահմիզյան, Հաղարծնի վանը և Խաչատոր Տարոնեցի երաժիշտ վարդապետը, «Գիտական աշխատությունների միջրութական ժողովածու» (արվեստագիտություն), № 1, Երևան, 1975:

դերձ<sup>4</sup>: Շարականը ծանոթ է Տարոնեցու ժառանգության հարցերին մոտիկ կանգնած հայագետներին (հ. Մ. Չամչյան, հ. Ղ. Ալիշան, հ. Հ. Հ. Տաշյան, հ. Գ. Զարպիանալյան, հ. Գ. Ավետիքյան և այլք), որոնք այն համարում են երաժշտ-բանաստեղծի լավագույն գործը, և իրավամբ<sup>5</sup>, թեպետև այն միջնադարյան հետինակի գանձերի հետ համեմատելու որիշ միջոց չտնիներ, քան եթե վերջիններին լոկ գրական խոսքերին ծանոթանալը:

Նշանավոր է ստեղծագործության հորինման առիթը: Հ. Մ. Չամչյանը և որիշներ էլ հաղորդում են, օգտվելով ձեռագրերից, որ Տարոնեցին այն երգել է XIII դարի սկզբներին, երբ Բյուսի-արևելյան Հայաստանում իրենց վախճանին հասան Զարարէ սպասալարի հայաձեռնումները՝ հայոց մինչ այդ ալլարված պատարագը բարեկարգելու, եկեղեցական համապատասխան պաշտոնյաների մասնակցությունը, ինչպես և պատշաճ սպասների ու զգեստների կիրառությունը ապահովելու ողղությամբ, և երբ Սահց էլ հավանություն ստանալով իշխանը հրամայեց բացօթյա

<sup>4</sup> Տես Զայնագրեալ երգեցողութիւնը սրբյ պատարագի, Կաղարշապատ, 1878, էջ 192—«Յոյժ ծանր»: Խոյն աղբյորում կան նաև շարականին եղանակի երկու այլ տարբերակներ (էջ 9—դա Շանը և էջ 51—դա Միջան), երկուսը ևս փոխանորված շարակնոցից, հատկապես վաղ միջնադարին վիրաքերող դա երգերից: Փոխառությունը կատարվել է նվազ հանդիսավոր պատարագների ժամանակ շարականը ավելի գնայտն և նույնիսկ նորդոր երգելու հապատակով և որպես արդյոխին ամենին էլ բացադիկ դեպք չէ մեր պատարագում: Ամեն ինչից երկում է, սակայն, որ Տարոնեցու ստեղծած մոլոդին «Յոյժ ծանր» կոչված հանդիսավոր տարբերակն է, ինչպես կամերադառնար տակալին, թենի դրան համապատասխանող խազակորմանը սու պայօն չենք համադիմակ մեզ մատչելի գրչագիր նին պատարագամատուցներում (Բմմտ.՝ Մատենադարան, ձեռ. № 3046, 1856 թվականից): Շարակնոցներում պահպանած խազակորմը, որին նույնական կվերադառնար ստորև, մեր փնտրածը չէ: Խոկ դպրության մի շարք հրատարակված գրքերում եղածն էլ, ցավոր, շարակնոցներից է վլոցված (Բմմտ.՝ Գիրը դպրութեան և տաղարան վայելու և գլուխիկ... Կ. Պոլիս, 1738, էջ 3—Շարական դա. «Խորթիրդ խորթին» և այլն):

<sup>5</sup> Հ. Գ. Ավետիքյանը «Բրաչակերտ» իսկ անվանց մեր պատարագի քմնարկիող համերգը, ու դա ամենին չափազանցություն չէ: Տես Օրա՝ «Բացասարութիւն շարակնոց», Վանատիկ, 1814, էջ 584—585:

պատարագ մատուցել (Լոռի մոտերքը, հատկապես հրամիրված նոգարականների ներկայությամբ, ուստի և, բնական է, ուժ շորով ու հանդիսավորությամբ):<sup>6</sup>

Այս բոլոր հանգամանքները գրեթե կասկած չեն թողնում, որ «Խորթիրդ խորթին»-ի եղանակի վերը հիշատակված երեք տարբեր ձայնագրություններից Տարոնեցունը պետք է լինի «Յոյժ ծանր» նշումն ունեցողը: Մանավանդ որ այն, իր վիպական հոգոր շնչով, հոգականության նոր որակով և զարդուրումների նկարագրով, կրում է ոչ միայն անհատական ստեղծագործության, այլև դարաշրջանին հատուկ մեղեդիական բարձր ճաշակի կնիքը, երբ շարականների հորինման վերսկսված ընթացքը ծավագում էր գանձերի, տաղերի ու մեղեդիների արվեստի բարերար ազդեցությունները:

Ստեղծվելով XIII հարյուրամյակի սկզբներին, զգեստավորման շարականը դանդաղ տարածվում է մինչև XIV դարի վերջը և XV—XVIII դարերի ընթացքում հաստատուն տեղ գրավում մեր պատարագում, որպես համահայկական ճամաշման արժանացած նախերգ<sup>7</sup>: Վերջապես՝ XVII—XVIII հարյուրամյակներում այն ոչ միայն անցնում է գրչագիր ու տպագիր շարակնոցներին<sup>8</sup>, այլև որիշ ժողովածուների հետինակ-

<sup>6</sup> Հ. Մ. Չամչյան, Աշվ. աշխ., էջ 179—182:

<sup>7</sup> Հմմտ.՝ Բ. Ցովս. Գաթրենան, Սրբազն պատարագամատոյցը հայոց, Վիճնա, 1897, գլ. է (Հայոց այժմու խորթիրամատոյցը ԺՈ. դարուն սկզբներէն մինչև ցայսօր):

<sup>8</sup> Հմմտ. Շարակնոց, Ամստերդամ, 1685, էջ 559: 1692 թ., էջ 514: 1702 թ., էջ 374: Կ. Պոլիս, 1710 թ., էջ 559 և այլն: Սրբացում ձայնավին նշում դա է:

<sup>9</sup> Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 742, էջ 98ա: Այսուղ, ինչպես և թիշ առաջ նշված հնատիփերում, շարականին խազագրությունն իր նույնամերքով չափավոր-ծանր մի տարբերակ է ցույց տայիս Այս առթիվ երածտական գրչագրերի զբնության ընթացքում մեզ համար ըմբռնելի դարձալ նոյն կամ նման երգերի մինույն կամ նույնատիպ տեղերում իրար հաճախ փոխարինող մի քանի նշանների և, հատկապես, «Խուննի» և «Ճուննի» հարաբերություններ: Խազավոր բազմաթիվ գրչագրերի համեմատությունից պարզվեց, որ նիշալ երկու նշանների մեղեդիսկան գորությունը սահուն վարդներաց շարժումն է, միմնականում չափական մեկ միավորի սահմաններում, կշռության (ոփթական) տարբեր գծագրերի մեջ՝ Վերջիններին ընտրությունը տողնելով կատարողի հակնեցությանը: Միայն թե «Խուննի» բաղկացած է երկու

ների ցուցակների մեջ, ըստ որում այստեղ տեղադրվելով Տարոնեցոյ անվան որոշակի հիշատակությամբ. «Խաչառոր վարդապետն Տարոնեցի՝ զնորհուրդ խորին»<sup>10</sup>:

Ստեղծագործության գրական բնագիրը կառուցվածքով<sup>11</sup> շատ մոտիկ է գանձերին, որով ոչ միշտադրում ընդհանուրացած նրա «շարական» անվանակոչությունը շատ պայմանական է: Հայագետներից մի քանի շարական չեն էլ անվանել բնակործը, այլ նրա մասին խոնդով, Տարո-

ճանասատիճանից (տես «Եջմանին», 1975, Բ, էջ 68—69), մինչ «ծովներ» երկու Խազագրերին մոտիկ ազգակցությունը պարզ արտացըլված է դրանց ածագրական արտաքին մենքում է: Բայց դրանք այդ տեսակետով իրար մետ երեք չեն շփորչում: «Ծովներ» կարող է շփորչել «վերադիր» կոչվող նշանի մետ թենպես տվյալ կապակցության ուշադիր քննությունից համար իսկույն կողմնորոշվում ենք) և մեկ էլ, անհնան (կորագիծ վերևից, նորիցնական դիրքով) գծագրելու դեպքում «պարովի» ու «ողորակի» մետ, ինչքան էլ որ դրանցից ավելի փոքր է լինում չափում: «Ծովներ» մետ ըստ էլեկտրան ամենաներս առնչակցություններ ունի «Ճնշելեր»-ը, որ առաջին կրկնապատկումն է: Դա պարզորչ բացահայտությամբ երևում է ինչպես «Ճնշելեր»-ի անվանակոչությունից, այնպէս և նրա գծագրական արտաքին պառկերից: Եվ այդ մասին ամերկիտ վկայություններ ներ նաև առատառագրել են իրամիշտ-գիտնականներից մի քանից:

<sup>10</sup> Հմտու. Հ. Անապան, Հայկական մատևագիտություն, Բա. Ա., Երևան, 1959, էջ LXVIII (Մատևագիտական բնագրեր, շարականների մեջինակներ, երեք խմբագրությամբ. տես Անապան խմբագրություն): Նոյնի տվյալներունը առկա է նաև տպագրված խազավոր գրերի բոլոր շարակնոցներում (տես՝ օրինակ՝ «Շարական բոգնոր երաց սուրբ և ողդափառ եկեղեցւոյ Հայաստանաց», Կ. Պոլիս, 1853, էջ Գ), ինչպես և «Զայնագրեալ Շարակնոցում» (Վաղարշապատ, 1875, էջ Զ):

<sup>11</sup> Հատկապես՝ ոտանավորի գերիշխող ննդավանի անդամներով.

Խորհուրդ խորին՝ անհաս անընկիցքն,  
Որ զարդարեցեր՝ զվիրին պետութիւնն.

Ի բառագաստ՝ անմատուց լուսոյն,

Գերապանն փառօք՝ դդասը հրույնաց:

<sup>12</sup> Հ. Մ. Զամշամը, Բ. Հ. Տաշանը, Բ. Գ. Զարանանայանը և որիշներ: Զետագիր պատարագամատուցներում և շարական չի անվանվում երգը: Հմտու. Վիեննայի Միհիթարյանց ձեռագրերից № 69-ը (էջ 111ա, «Խաչառոր վարդապետի ասացալ վասն զգեստի»; «Խորհուրդ խորին»...) և № 267-ը (էջ 65ր, «Խաչառոր վարդապետէ ասացալ վասն զգեստաորել բահանացի»: «Խորհուրդ

նեցու գանձերը նկատի ունեցող կապակցության մեջ, այն համարել են երաժիշտ վարդապետի լավագույն ստեղծագործությունը:

Դանաւով մեզ գրադեցնող կրթողին, որպես երաժշտա-բանաստեղծական ամբողջություն, նիշեցնենք, որ վերը նշեցինք նրա զուտ գեղարվաստական արժանիքները: Անհրաժեշտ է ավելացնել, որ այն նորինվածքով ևս խիստ ուշագրավ է: Ներկայացնում է երկ-եռմասակի հազվագյուտ մի ձև, որ համապատասխանում է գրական տաև կեսին<sup>13</sup> (Երկու տող): Ողջ կառուցը բաղկացած է երկու մասից, որոնցից յուրա-

խորին...). տես Յ. Տաշեան, Ցուցակ..., էջ 311 և 684: Ամենայն հավանականությամբ երգը Շարակնուի մեջ անցնելուց հետո է կոչվել «շարական հանդերձի պատարագին» (ինչպես Ներսուս Շնորհապու «Ցայս յարեց»-ն էլ, որ նույնպես նոր խազավորումով է պատպանվել, հակառակ մեղեդիի խիստավագրին՝ «Շարական հնձերկութեան պատարագի»): Ի դեպ, ձեռագրերում հանդիպում է համանարա Տարոնեցու մի ստեղծագործությունը ևս՝ «Շարական հանդերձ օրինելոյ հարասնաց», ձայնային դժումով և անհնականապիտիրեն կիսատմացած «Խաչատոր»՝ ծայրակապով («Բազմավայ», 1882, էջ 319): Արդյոք սրա օրինակով է շարական անվանվել նաև մեր պատարագի հախերը:

<sup>13</sup> Պատարագի արդեն նոված միաձայն հրատարակությունը՝ Ն. Թաշճանի, Վաղարշապատ, 1878, էջ 193) երգի առաջին մասը մեջում է բանաստեղծական տան լոկ առաջին տողի զագործությամբ: Դրան հետևել է նաև Մ. Եկմայլյանը, պատարագի բառաձայն մշակման մեջ առաջ բերելով ճանապարհում երգի շափա-կշռույթային կառուցվածքի իր մեկնարամությունը (տես Երգեցողութիւնը սրբոյ պատարագի Հայաստանաց սուրբական և նկարագրական եկեղեցւոյ փոխարթուակ և նորդաշնական իրին և ի շրիս ձան ի ձևու Մ. Եկմայլյան, Լեյցիդ, 1896, էջ 177): Առավելապես շտփա-կշռույթի առումով երգի մի նոր ընթերցումը տվեց Կոմիտաս վարդապետը (Հմտու. Կոմիտաս վարդապետ, Դաշնաւորեակ երգեցողութիւնը սրբոյ պատարագի Հայաստանաց սուրբական և նկարագրական եկեղեցւոյ փոխարթուակ և նորդաշնական տարրեր սկզբաների ող գեղարվեստական մակարդակի նարցերը և խուզով երգի սոսկ մայք երանակի մասին, անհրաժեշտ է նշել. Կոմիտաս վարդապետի կատարած կարևորագույն ճշգրտումն այն է, որ նա բանաստեղծական տան երրորդ տող («Ի բառագաստ անմատուց» վերադառնում է մեղեդիի սկզբին: Դրանով հատակվում է երգի տան գրական տան խմական հարաբերությունը:

ԽԱՅԱՏՈՒՄ ՏԱՐՈՒՆԵՐ

GRAVE

ԽՈԽՀՈԽԻՄ ԽՈԽԻՆ

ԳՐԱՌՈՒՄԸ Ն ԹԱՇՑԱՆԻ  
ՆԵՐԴԱՇՑԱԿԵց Ն ԹԱՇՄԱՑԱՆԸ

Contralto Solo

Organo

4 6 Խոր. Բուրդ.

5 խն 8 4 րիթ

6 մթ Բաս

Musical score page 50, featuring three staves of music. The top staff uses a treble clef, the middle staff an alto clef, and the bottom staff a bass clef. The key signature changes between F major (one sharp) and C major (no sharps or flats). The time signature is common time (indicated by '8').  
The lyrics are written in Armenian above the notes:  
- In the first measure, the lyrics are '4 ս' (4 s) and 'օնս' (ons).  
- In the second measure, the lyrics are 'կիզը' (kizey) and '3 որ' (3 or).  
- In the third measure, the lyrics are '2 զար' (2 zar) and 'դա - 5 թ' (da - 5 th).  
Dynamic markings include: *mp*, *p*, *p*, *pp*, *mf*, *mf*, *mf*, *mf*, *mf*, and *mf*. The score includes various musical markings such as grace notes, slurs, and fermatas.

A page of musical notation for orchestra and piano, featuring six staves of music with various dynamics and markings. The music is divided into measures by vertical bar lines. Measure 2 starts with *gtr* (guitar) dynamics. Measures 5 and 6 show woodwind entries with *qfb* (quarter note forte) and *phG* (piano G string). Measure 6 includes dynamic markings *mf*, *mp*, and *wb*. Measures 4 and 5 feature violin entries with *vnL* and *phBn* dynamics. Measure 5 ends with *pp* (pianissimo).

բանշյուրը զուգորդվում է բանատեղծական տաճ մեկ տողի հետ: Երկրորդ մասը, սակայն, իր մերժին, ունի երկու հատված: Դրանցից առաջինը («Որ զարդարեցեր») աչքի ընկելելով ձայնեղանակային համադրությունն ստեղծող զարտուլի ելեջով, կատարում է յորահատուկ «միջին» մասի դերը: Երկրորդը («Զվերին պետութիւնը») վերահաստառում է միմնական ստեղի ձայ-

նեղանակն ու եզրափակում մեղեդին: Առաջ է գախս ստեղի-զարտուլի-ստեղի ձայնեղանակային կառուցվածքը, տեղադրված մոտավորապես հավասար երկու մասերից բաղկացած հորինվածքում (շենքում):

Մենք չափակշողքի առումով ևս միմք ենք ընդունում Թաշճյանի իրագործած ձայնագրությունը:

